գ) Քննել և լուծումն տալ այն խնդիրներին, որ առաջարկում են գլխաւոր և տեղական վարչութիւնները.

ե) Ընտրել գլխաւոր վարչութիւն.

զ) Հաստատել անշարժ կայքեր գնելու կամ վաճառելու որոշումները.

է) Վաւերացնել գլխաւոր վարչութեան և Ընկերութեան բոլոր հիմնարկութիւնների ծախսերի նախահաշիւը:

16) Պատերազմի վայրում գլխաւոր վարչութիւնը ունի.

ա) Ամէն մէկ գործող բանակում գլխաւոր լիազօր, և

բ) Շրջանային լիազօրներ, համապատասխան ռազմաճակատի զինուորաշրջանների թիւին:

Լիազօրները ընտրում են գլխաւոր վարչութիւնից: Ոչ ռազմաճակատում գլխաւոր վարչութեան ծրագիրները իրականացուում են կամ տեղական հիմնարկութիւնների, կամ գլխաւոր վարչութեան ընտրած լիազօրների միջոցով:

17) Գլխաւոր լիազօրների տրամադրութեան տակ են դրուում գլխաւոր վարչութեան կողմից ուղարկուած սանիտարական խմբերը, գումարները և նիւթերը: Ոչ միայն Կարմիր Խաչի խմբերը, այլ նաև միւս բոլոր սանիտարական խմբերը, ում կողմից էլ որ կազմուած լինեն նրանք, հայերից՝ թէ օտարազգիներից, առանց բացառութեան ենթարկուում են գլխաւոր լիազօրին:

(Հաստատուած է 1920թ. մարտ 19-ին)

1920թ. բամբակի բերքը մենաշնորհից ազատելու մասին. — Բամբակի մենաշնորհի 1918թ. սեպտեմբերի 11-ի և դեկտեմբերի 3-ի ու 1919թ. նոյեմբերի 25-ի օրէնքների ոյժը չի տարածուում 1920թ. բամբակի բերքի վրա:

(Հաստատուած է 1920թ. մարտ 22-ին)

Կանոնադրութիւն Հայաստանի Պետական Հանրային Գրադարանի. — 1) Հայաստանի Պետական Հանրային Գրադարանը հիմնուում է պետութեան մէջ գիտական գործունէութեան զարգացման և յատկապէս Հայաստանի եւ Առաջաւոր Ասիայի հին ու նոր ժողովուրդների բազմակողմանի ուսումնասիրութեանը նպաստելու համար:

2) Գրադարանը պահպանուում է պետութեան միջոցներով և մասնաւոր նուիրաբերութիւններով: Բացի այն հրատարակութիւններից, որոնք ձեռք են բերուում գրամով և հասնում են իրրեւ նէր, Պետական գրադարանն ստանում է երեք-երեք օրինակ այն բոլոր հրատարակութիւններից, որոնք լոյս են տեսնում Հայաստան աշխարհում:

Ծանօթութիւն. —Այս հրատարակութիւնները գրադարանին հասցնելու պարտականութիւնն ընկնում է տպարանների վրա:

3) Պետական Հանրային գրադարանը գտնուում է Հայաստանի Հանրային Կրթութեան և Արուեստի նախարարութեան իրաւասութեան տակ:

4) Գրադարանի գործունէութիւնը ղեկավարում է գրադարանի խորհուրդը, որի կազմի մէջ մտնում են մի-մի ներկայացուցիչ պետական համալսարանի իւրաքանչիւր ֆակուլտէտից, Պետական Ազգագրական-մարդաբանական Թանգարանի ներկայացուցիչը, գրադարանապետը և նրա աւագ օգնականը:

Ծանօթութիւն.— Մինչեւ համալսարանի և Թանգարանի հիմնումը, բացի գրադարանապետից և նրա աւագ օգնականից, գրադարանի խորհրդին մասնակցում են Հանրային Կրթութեան նախարարութեան կողմից նշանակուած մինչեւ հինգ անձ: